

ՀՊՏՀ ԳՄ գրադարանից օգտվելու ընթացակարգ

Գրադարանից օգտվելու իրավունք ունեն ՀՊՏՀ Գ/Մ՝ բոլոր աշխատակիցները՝
(պրոֆեսորադասախոսական և վարչական) և ուսանողները:

Այլ ֆիզիկական անձիք ՀՊՏՀ գրադարանից կարող են օգտվել միայն մասնաճյուղի
սոփոսանի կողմից գրավոր թույլտվություն ստանալու դեպքում:

Ինչպես դառնալ ընթերցող.

Գրադարանի ընթերցող դառնալու և ընթերցողական քարտ ունենալու համար պետք
է դիմել գրադարան ներկայացնելով՝

Ուսանողները

Անձը հաստատող փաստաթուղթ /անձնագիր/
Ուսանողական տոմս

Դասախոսները

Անձը հաստատող փաստաթուղթ /անձնագիր/
տեղեկանք կադրերի բաժնից, որտեղ պետք է նշված լինի աշխատանքային
պայմանագրի տևողությունը

Այլ անձիք

Անձը հաստատող փաստաթուղթ(որը կմնա ՀՊՏՀ Գ/Մ գրադարանում միջև
գրքի վերադարձը)

Գրադարանից օգտվելն անվճար է:

Ընթերցողական քարտից օգտվելու կանոնները.

Ընթերցողական քարտը տրվում է որոշակի ժամկետով՝ կախված ընթերցողի
կարգավիճակից:

Ընթերցողական քարտը անվճար է:

Ընթերցողական քարտը կարելի է վերաթողարկել միայն՝ ընթերցողի հետ
համաձայնեցնելու դեպքում:

ՀՊՏՀ Գ/մ գրադարանի ընթերցողները իրավունք ունեն՝

Պատվիրել գրքեր(Ընթերցելու նպատակով)

Առցանց համակարգի միջոցով կամ գրադարան այցելելով ընթերցողը կարող է պատվիրել գրքեր(Ընթերցելու նպատակով): Գիրքը ուսանողին է տրվում մեկ աշխատանքային օրվա ընթացքում:

ՀՊՏՀ Գ/Մ գրադարանում գրանցված բոլոր ընթերցողները կարող են վերցնել **մինչև 5 գիրք եթե ուսանող են , մինչև 7 գիրք եթե դասախոս են:**

Գեղարվեստական գրականությունը և ուսումնամեթոդական գրքերը կամ դասագրքերը տրվում են 21 օրով :

Հազվագյուտ, մեկ օրինակ գրականությունից, հանրագիտարաններից, ատենախոսություններից կարելի է օգտվել **միայն** ընթերցասրահներում:

Գրականությունը ընթերցասրահներից դուրս չի տրվում:

ՀՊՏՀ տարածքում օգտվել առցանց գրքերից և ազատ մատչելիության շտեմարաններից:

Օգտվել գրադարանի ընթերցասրահից և այնտեղ պահվող մասնագիտական ամսագրերից և մեկ օրինակ գրքերից:

Հասանելի գրքերի ժամկետի երկարացում մինչև 3 անգամ:

Ընթերցողի պարտականությունները

- ✓ Ընթերցողը կրում է նյութական պատասխանատվություն գրադարանի ֆոնդերին պատճառած վնասի համար:
- ✓ Գիրքը կորցնելու կամ վնասելու դեպքում ընթերցողը պարտավոր է փոխհատուցել կորուստը համարժեք մասնագիտական գրականությամբ կամ գործող կարգին համապատասխան որոշմամբ:
- ✓ Յուրաքանչյուր ուսումնական տարվա վերջում ուսանողը պարտավոր է հանձնել իր մոտ եղած գրականությունը:
- ✓ Գրադարանի կանոնները խախտելու դեպքում, ընթերցողը զրկվում է գրադարանից օգտվելու հնարավորությունից:

- ✓ Եթե այլ անձ չեն վերադարձնում վերցրած գրքերը գրադարանին, ապա չեն ստանում անձը հաստատող փաստաթուղթը:
- ✓ Եթե ընթերցողն ազատվում կամ հեռացվում է համալսարանից, նա պարտավոր է վերադարձնել իր մոտ եղած գրականությունը:
- ✓ Շրջիկ թերթիկը կնքվում է միայն ընթերցողի մոտ եղած գրականությունը հանձնելուց հետո:

Գրադարանի աշխատանքային ժամերը՝ 10.00-14.00